# ՄԵՐ ԴԵՐԱ= ՍԱՆՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ԿՈՄԻՏԷԻ“

## ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ 25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ԿՈՄԻՏԷԻ“

# ՄԵՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ

## ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ 25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Խմբագրութեամբ Գ. ԼԵՒՈՆԵԱՆԻ

1916

ԹԻՖԼԻՍ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հրատարակելով ՄԵՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ անունը կրող այս ալբոմը նպատակ ենք ունեցել անզուգական ողբերգու-դերասան Պետրոս Ադամեանի մահուան 25 ամեակի առթիւ նրա յիշատակը անմոռանալի պահել մեր իրականութեան մէջ։ Հայ թատրոնի այդ հոյակապ դէմքի յաւերժական յիշատակը յարգած լինելուց բացի՝ մենք ջանացել ենք այստեղ ի մի խմբել հայ բեմի համարեա բոլոր յայտնի եղած դերասանների և դերասանուհիների պատկերները, որքան որ հնարաւոր է եղել մեզ համար։

Կեանքի նորմալ պայմաններում անշուշտ կարելի կը լինէր ներկայ գործը աւելի լիակատար և աւելի ճոխ ցուցադրել հայ հասարակութեան առաջ. սակայն մեր ժամանակին յատուկ մի շարք անբարեյաջող հանգամանքներ զգալի կերպով դժուարութիւններ առաջ բերին և գործն էլ շատ յետաձգեցին։

Վաթսուն տարուց աւելի գոյութիւն ունեցող հայ թատրոնը մինչև այժմ չունի իր գրած պատմութիւնը, այդ իսկ պատճառով թերևս շատ պայծառ դէմքեր մնացած լինեն անյայտութեան մէջ և մանաւանդ որտեղից կարելի էր ներկայ պայմաններում գտնել նրանց լուսանկարները։

Վարչութիւնս իր պարտքն է համարում խորին շնորհակալութիւն յայտնել պ. Գ. Լևոնեանին, որը գործի ծանրութեան մեծագոյն մասը վերցրել էր իր վրայ։

Հայ Օրիորդների կոմիտէի Վարչութիւն

1916 թ. սեպտեմբ.
Թիֆլիս.

Ալբոմում տեղ չեն գտել օտար բեմերում գործող հայ դերասանները, ինչպէս և օպերայի և օպերետի դերասանները։

Ալբոմը խմբագրուած և տպագրութեան յանձնուած լինելով 1916 թ. սկիզբներին, բնականաբար նրա մէջ չեն կարողացել մտնել վերջին թատերաշրջաններում մեր բեմերում գործող նորեկ դերասանները։

Պատկերները դասաւորուած են Ադամեանից յետոյ՝ ժամանակագրական կարգով. երբեմն մեռած և վաստակաւոր դէմքերին տրուած է յարգանքի առաջնութիւն։

Պատկերների ընտրութիւնը կատարել ենք մեզ մօտ հաւաքուածների միջից. հակառակ մեր ցանկութեան և դիմումներին աւելի առատ նիւթ չենք կարողացել ստանալ։

ԽՄԲ.



ԱԴԱՄԵԱՆ՝ ՀԱՄԼԷՏ



ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ



ԱԴԱՄԵԱՆ՝ ՕԹԷԼԼՕ





ԱԴԱՄԵԱՆ ՑՕ-ԱԿԱՆ ԹՈՒԵՐԻՆ

